

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Բաղաճական, Գիտական

5-րդ ՏԱՐԻ, Բ. Ի 32

Գ. ՇՐՋԱՆ

10 ՕԳՈՍՏՈՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաբերդի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար "Revue Massis" և զուտներուն համար ՅԻՐԱՆԻ ղը., կանխիկ վճարելի: Արտատպան 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախիշը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւնը լրնջումուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին բնական ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ըջէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք սրտիս քերք ստացած են, պէ՛տ է խնայել խնայելն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջոյն տեսակ բաժանորդները նկատողութեան չեն առնուի:

Ձի երեստակաւամ ձեռագիրները եւ չեն դարձուի:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزته سي اداره سته

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՄՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Պատարա-Սերայի Լիսեին դեմ

Դե. Եւ. Շք. օրերը Կառաւոսեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԹԱՐԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի Բ Ա Ն Կ Ա Լ Թ Ի

46րդ Տ Ա Ր Ե Շ Բ Ջ Ա Ն

Վարժարանս հաստատուած է 1857ին . նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական , բարոյական եւ գիտնական կրթութիւն մը : Վարժարանի վարչութիւնը՝ Վիեննայի Միւի-թարեանց ձեռքն է : Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Միարան-ներէ եւ վիայեալ արտաքին ուսուցիչներէ , պիտի կազմեն այս տարի 21 հոգի : Ուսմանց ծրագիրն է՝ արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջա-գիրը , որ կը համապատասխանէ գերմանական Բէալական դպրոցին (Realschule) յառաջա-գրին . բայց ըստ կարի յարմարութեամբ է այս ծրագիրը միշտվայրի պիտոյից : Վարժարանիս կատարեալ ընթացքն աւարտող աշակերտնե-րը կրնան շատ զիւրութեամբ եւ առանց քննութեան Եւրոպայի ո եւ է բարձրագոյն վարժարանի յաճախել՝ ուսմունքը շարունա-կելու համար (ինչպէս ունինք աշակերտներ Վիեննա , Չուրիցերիս եւ Գաղղիոյ քանի մը քաղաքները) եւ կամ կրնան վաճառականու-թեան ձեռնամուխ ըլլալ : Աւանդուած լեզու-ներն են՝ Հայ. Տճկ. Գաղղ. Գերմ. եւ Անգլ. (վերջին տարին) : Գաղղիերէն լեզուն գործնա-կանապէս օտրվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու եւ իրենց վրայ պիտի հսկեն երեք գաղղիացի Մարիսոյներ , զորոնք յատկապէս բերել տուաւ վարչութիւնս Բարիկէն : Այս տարի չորս պի-տի ըլլայ առնց թիւը : Նոյնպէս գերմանե-րէնի համար հին ուսուցիչներէն զատ , ՆՈՐ մըն ալ բերել կուտայ այս տարի վարչութիւնս Պերլինէն : Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամացուցակ մը , որուն մէջ մանրամասն կը նշմարուի աշակերտին բարո-յական եւ ուսուցչական վիճակը , իւրաքան-

չիւր դասերու մէջ առած նիշերը եւն. : Վար-ժարանս կը գտնուի ընդարձակ ծառայից պար-տէզի մը մէջ . ունի իւր յատուկ բժիշկն եւ իւր դեղարանը : 1902-1903 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 2/15 Բշ. օրը : Դպրոցամուտի քննութիւնները պիտի կա-տարուին Օգոստ. ամսոյն 30/ին եւ 31/ին , իսկ դասերը կը սկսին կանոնաւորապէս Գշ. օրը Սեպտ. 3ին : Հրատարակուած է վարժարանի հրդ տեղեկագիրը , եւ աշակերտք կրնան առ-նուլ զայն ամէն օր մինչեւ կէս օր : Վարժա-րանիս նկատմամբ ընդարձակագոյն տեղեկու-թիւններ ուզողը , թող խնդրէ վարժարանի վարչութեանէն՝ վարժարանիս ծրագիրը , եւ կամ դիմէ հետեւեալ հասցէին՝

Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիչիան

Կ. Պոլիս, Բանկայթի

P. Gabriel Dr. Ménévichian
Constantinople, Pancaldi

ՌՈՊԵՐԴ ԲՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջնը պիտի սկսի Երկուշաբթի Սեպտ. 2/15 : Գար-գաղղութիւններ եղած են նոր զիւրութիւն-ներ տալու վաճառականական ուսմանց հա-մար : Միայն ուն բժիշկ մը՝ աշակերտաց առողջութեան , մարմնամարզներուն ու խղի-րուն , ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ պիտի հսկէ : Այս տարի կը բացուի նաեւ փոքր աղայոց լատկացեալ նոր շէնքը , մտանաւոր հսկողու-թեան տակ , ուր կարելի պիտի ըլլայ այսու-հետեւ մինչեւ տասը տարեկան աշակերտներ ընդունել :

ՀԱՅՈՒՇԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Ա. Տ. Ա. Ր. Ա. Ջ. Ա. Բ

Վարժարանիս նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 10 (ն. Տ.) Դշ. : Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 Օսմ. ոսկի , որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. սկիզբը , եւ միւս կէսը՝ Յունվարի մէջ : Դաշնակի դաս առնող-ները 3 , իսկ երգեհոնի դաս առնողները 1 1/2 Օսմ. ոսկի աւելի կը վճարեն :

Վարժարանին յայտագիրը՝ փառաբողոք-բուն ձրի կը զրկուի : Բանակցութեանց հա-մար գրել առ Տոքթ. Ս. Գալպաշեան , Ան-նապէս Խնարակաշուքեան , Ասարապար :

ՄԱՍԻՍ

517 ՏԱՐԻ

— 10 ՕԳՈՍՏՈՍ 1902 —

ԹԻԻ 32

ԲՈՎԱՆԴՈՒԹԻՒՆ

Ծուռ ըմբռնում (Գրական տեսութիւն) ՄԼԲՄԷՏԷՍ : — Շապիկի Սերին (Նորավեպ) ՅՈՎ. ՀԱՆ. ՆԷՍ ՍԵԹԵԱՆ : — ԹԵՐԱՌԱՄՆԵՐ (Սիրերգ) ԲԱՐՈՒՄ. Ե. Դ. : — Լա Փիտան (Ուղեւորական տպաւորութիւն) ԱՐԲ. ՏԷՐ. ՅԱԿՈԲՅԱՆ : — ՆԵԼԲ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԲԻՆԻ մէջ (Թերթ) : — ՅՈՒՇԱՆԵՐ :

ԾՈՒՌ ԸՄԲՐԱՆՈՒՄ

Գրականութեան շրջանակին մէջ իյնող բազմաթիւ սխալ ըմբռնումներու վրայ հասնող ալ սկսած է բարդուիլ մասնաւորաբար քննի մը տարիէ ի վեր : — Փրանսական գրականութիւնը անպէտ է, ֆրանսական գրականութիւնը օգուտ մը չէ՝ ունեցած, ֆրանսական գրականութիւնը պէտք չէ՝ գտնել . . . որովհետեւ գովասանքի արժանի բան մը չէ արտադրած : Որովհետեւ այդ գրականութեան ամէնէն նշանաւոր դէմքերը, հին աստեղներէն սխալ մինչեւ այսօր, բոլորովին պարագայ մարդիկ եղած են : — Երկու երեք տարիէ ի վեր, քիչ մը ամէն մարդ, երէկուան զրպանականէն մինչեւ առեւտրական անշաջողութեան մը պատճառաւ փակեղը գլուխը դնող տէրտէրը, այս կոտորաւոր տեսութիւնները կը պարզեն թերթերու մէջ, ինչ որ ֆրանսական գրականութեան կը պատկանի, վնասակար է, կը պոռան, աղտոտ է, անօգուտ է : Փրանսացի գրող մը, այդ գրողը ըլլայ Օկիւսթ Քոկէ մը, Լիթոէ մը, Ռենան մը, Զոլա մը, եւ կամ ուրիշ ո՛ր եւ է մէկը, իրենց աչքին գոյութեան իրաւունք չունի : Կամ անբարոյական է, կ'ըսեն, կամ գայթակղութիւն կը պատճառէ, կամ ոչինչ մարդ մըն է, վերջապէս ինչ որ կ'արելի է երեւակայել զատողութիւններու այդ չնայխարհիկ շարքին մէջ :

Զոլոյ ուղիքն ընաւ զբաղիլ ա՛յս աստիճան անհիմն ու անհիթեթ տեսութիւններով,

եթէ երբեք ատոնք իրապէս արմատ բռնած չըլլային այն սերունդին մէջ՝ որ նոր կը սկսի ծիլ տալ : Թերթի զարգացման տէր ժողովուրդներու մէջ, — ինչպէս է մերինը, — ամէնէն անհիմն կարծիքներն իսկ որոշ արձագանդ մը կը գտնեն, ու տակաւ ցեղային ընդհանուր ըմբռնումի մը հանգամանքը կը ստանան : Նախապաշարունակներու պէս են ատոնք . օր մը ծայր կ'առնեն բոլորովին աննշան ենթադրուած անկիւնէ մը, եւ ահա շատ չանցած, կը տեսնես որ արդէն իսկ չէնք շնորհք երակաւորուելու են ամէն կողմ : Այս պատճառաւ՝ միշտ պէտք է հակազդել բոլոր այդ ծուռ ըմբռնումներուն, բոլոր այդ սխալ գատողութեանց, մանաւանդ երբ խնդիրը գրականութեան կը պատկանի : Որովհետեւ գրականութեան մէջ՝ սխալ համոզում մը աւանդութեան մը չափ զօրաւոր արմատ կը բռնէ միշտ . նոր թեւ տունող գրական սերունդ մը՝ տակաւին խոսկ մտքի, ու շա՛տ ալ սահմանափակ ծանօթութեանց տէր, ճակատագրականօրէն կը մղուի իւրացնել իրմէ առջի սերունդին կողմէ յայտնուած կարծիքները, գատողութեանց կերպերը . իր տգիտութեան, անփորձութեան պատճառաւ չի կրնար գոնէ ընտրանքով կատարել այդ իւրացումը, գոնէ իր ընդօրինակութեանց մէջ ճիշդին, գեղեցիկին կառչիլ . եւ եթէ ծուռ ըմբռնում մը ըլլայ իւրացուցածը, ա՛լ դուք մտածեցէք թէ արդիւնքը ինչ կ'ընայ ըլլալ :

Այդ կարգի մտածումէ մը զրդրուած , պէտք
կը տեսնեմ հոս պարզելու կարգ մը նկատում-
ներ ֆրանսական գրականութեան եւ մեր
գրականութեան միջեւ գոյութիւն ունեցող
կապերուն նկատմամբ , ինչ որ պարտակա-
նութեան պէս բան մը կ'երեւայ ինծի :

* * *

Ինչո՞ւ ֆրանսական միաքն ու բարքերը
այս աստիճան զգալի ազդեցութիւն մը ըրած
ըլլան Պոլսահայ համայնքին վրայ , կ'ըսեն բո-
լոր անոնք՝ որոնք այդ ծուռ ըմբռնումին կառ-
չած են : Այդ ազդեցութիւնը պարզապէս ան-
ըմբռնելի , անիմաստ կ'երեւայ իրենց , ու
թերեւս այդ իսկ է պատճառը բոլոր այն ան-
հեթեթ քարոզներուն՝ զորս մեր զլխուն կը
կարգան , ֆրանսական գրականութեամբ ու
բարքերով խմորուած ըլլալնուս համար :

Ասոնք չեն մտածեր սակայն թէ Պոլսա-
հայ համայնքը ճակատագրականօրէն պիտի
ենթադրուէր այդ ազդեցութեան , թէ իրեն
համար բոլորովին անխուսափելի բան մըն էր
ատրկա : Մարդիկը որոնք եօթանասնական
թուականներուն հիմը դրին մեր աշխարհա-
բար , — այսինքն ժողովրդեան մտաչելի , —
գրականութեան , մարդիկը որոնք Պոլսահա-
յոց զարգացման առաջին աղբիւրները եղան ,
զրեթէ առանց բացառութեան Ֆրանսա կըր-
թուած էին : Օտեան , Ռուսիսեան , Միսաք-
եան , Իւթիւճեան , Զօրայեան , վերջապէս
այդ թուականներուն ապրող բոլոր ցայտուն
գէմքերը՝ որոնք տարածուն ու նշանակելի
ղեր մը ունեցան համայնքին զարգացման
մէջ , ֆրանսական միաքով սնան : Անոնցմէ
առաջ իսկ , արքունի ծառայութեան մէջ
դանուող ուրիշ ո՛չ նուազ ցայտուն գէմքեր ,
որոնք արդար հռչակ մը շահած են , զէպ ի
Ֆրանսա ուղեւորած էին , Կայս. Կառավա-
րութեան նպաստով , կառարկադործուելու
եւ Պոլիս վերադառնալու համար : Երկրին մէջ
ամէնէն աւելի տարածուած եւրոպական
լեզուն ֆրանսերէնն էր , եւ այն բարեկամա-
կան սերտ կապը՝ որ , ինչպէս այժմ , իրարու
կը զօգէր Օսմանեան Կայսրութիւնն ու ֆրան-
սական Կառավարութիւնը , ա՛լ աւելի ընդ-
հանուրին ուշադրութիւնը կը դարձնէր զէպ ի

Ֆրանսական ազգը , որ այդ ատեններուն մա-
նուաւեղ արդէն իսկ շատ նշանակելի դիմ
մը գրաւած էր բովանդակ եւրոպայի մէջ :

Իէպ ի Ֆրանսա զարձած այդ ընդհանուր
ուշադրութեան անմասն չէր կրնար մնալ ան-
շուշտ Պոլսահայ համայնքն ալ : Այդպէսով է
որ ծնողքներ տակաւ կրթութեան կեդրոնի մը
գաղափարը կազմեցին Բարիզի նկատմամբ ,
— գաղափար մը՝ որ կարծուածին չափ սխալ
ալ չի կրնար նկատուիլ այդ ատեններուն հա-
մար , — եւ իրենց գտնուելներուն զարգաց-
ման գործը վստահեցան ֆրանսական վարժա-
րաններու : Այդ ատենի ծանօթ դէմքերուն ,
զորոններուն Ֆրանսայի մէջ կրթուիլը պար-
զապէս արդիւնքն է այդ համոզման , որ ան-
խախտ փնաց տարիներ ու տարիներ , եւ ա-
նոնք որ Ֆրանսա ուսնելու գացած էին , ի-
րենց վերադարձին ա՛լ աւելի տուր , ա՛լ ա-
ւելի անվկանդ հանդամանք մը տուին այդ
համոզման : Ֆրանսայի մէջ , ֆրանսական
ոգուով ու բարքերով սնած , ընտկանարար
տարբեր բան մը չպիտի կրնային ընել :

Ժամանակ ետքը , ուրիշ աւելի էական
պարագայ մըն ալ նպաստեց այդ ազդեցու-
թեան ծաւալմանը , Համայնքին զարգացման
այդ առաջին քայլերուն , եւրոպական միակ
լեզուն որ պարտաւորիչի պէս բան մը գար-
ձած էր մեր վարժարաններուն մէջ , ֆրան-
սերէնն էր . միւս կողմէ՝ ունեւոր ստենիւթ
մէջ , միշտ այդ լեզուն է որ աղոց կ'աւան-
դուէր յատկապէս վարձուած ֆրանսացի եւ
կամ քիչ շատ ֆրանսերէն զիտցող հայ զաւ-
տիարակներու միջոցաւ : Ամբողջ սերունդ մը
այդ կերպով դաստիարակուեցաւ , ամբողջ
սերունդ մը ֆրանսերէնով կազմուեցաւ ,
զարգացման մէթոսները , աշխարհաճանաչու-
թեան եղանակը , կեանքի եւ իրերու ըմբռ-
նումը , վերջապէս ամէն բան զուտ ֆրան-
սական էր այդ սերունդին քով , Ֆրանսերէ-
նէն զատ ուրիշ եւրոպական լեզու չկրնա-
լուն , մի միայն ֆրանսական գրականութեան
ծանօթացաւ ու եթէ երբեք կրցաւ քիչ շատ
գաղափար կազմել եւրոպական ուրիշ ազգե-
րու գրականութեան ու բարքերուն նկատ-
մամբ , միշտ ֆրանսական աղբիւրի մը մի-
ջոցաւ էր :

Արդ, ինչպէ՞ս կ'ուզուի որ այդ պայմաններուն մէջ կազմուած սերունդ մը զերծ մնայ ֆրանսական գրականութեան ազդեցութենէն։ Արդէն ուսման թիւը գրականութեան հակայ ծառայման աստիճանն էր. Հիւկոյի անունը բերնէ բերան կը պտուածէր ամէն տեղ, իր գործերը կը թարգմանուէին բոլոր քաղաքակիրթ ազգերու կողմէ. հոսանքը, որ օրի մընկեմէն հանգամանք մը կը ստանար, եւ իրեն հետ կ'առնէր կը տանէր բովանդակ աշխարհի գրականութիւնները։ Բացարձակապէս անկարելի էր որ մերիներն ալ չըմտուէին այդ հոսանքէն. նոր, առողջ, գրաբարին իրթնութիւններէն զերծ ու մանաւանդ ժողովրդին հասկնալի լեզուի մը հիմքը դրուած էին, թերթեր, հանդէսներ կը ծնէին շարունակ, ամէնքն ալ նոր լեզուով. աշխարհաբար զրիւր օրուան փառքը դարձած էր, փառք մը որ աւելի ետքերը բոլորովին նուիրագործուեցաւ Մալիսի մէջ մղուած «Լեզուապաշտ»ին շնորհիւ։ Պէտք էր գործածել այդ լեզուն, պէտք էր արտադրել այդ լեզուով, քանի որ մանաւանդ ամբողջ գրականութիւն մը, — ֆրանսականը, — իբր օրինակ կեցած էր մէջտեղ։

Եւ ո՞հա ծայր առաւ Բալթիշի գրականութիւն մը, որ միահողոյն ամբողջ սերունդի մը կողմէ սկսուած ըլլալուն համար, քիչ աստուան մէջ կատարեալապէս տարածուեցաւ բովանդակ համայնքին մէջ։ Ֆրանսական դրամատիւնն ու բոլոր սեռերը փորձուեցան իրարաբար. — վէպ, թատրոն, ֆանթէզի, խառնասիրական հատուածներ, արձակ քերթուած, նամականի, զրոյց, քննադատութիւն, մատուցութեան նկարագրութիւն, վերջապէս ամէն բան։ Միեւնոյնը նաեւ ոտանաւորին համար։ Մէկ խօսքով, ֆրանսական գրականութեան ստացած բոլոր երեւոյթները օրը օրին իրենց հայացի նմանողութիւնը կ'ունենային մեր թերթերուն մէջ, Մերիները ո՛չ թէ միայն գրելու կերպն, ու ոգին կ'իրացնէին, այլ նաեւ գիրքերու կամ յօդուածներու վերաբերմանը։ Ամէն օր շունդալից նորութիւն մը կը ներմուծէր մեր գրականութեան մէջ, շատ քիչ բոլորովին սխալ հասկցուած, բոլորովին զէ ներկայացուած։ Գրեթէ միեւնոյն աստիճան

սկսած էին նաեւ թարգմանութիւնները, նախ անհաշան, անկարեւոր գործեր, յետոյ հոյակապ երկասիրութիւններ, գեղեցիկ հատուածներ, քանաստեղծութիւններ, թարգմանութիւններ, վէպեր, եւայլն։ Թերթերն ալ, հանդէսներն ալ միշտ ֆրանսականին վրայ ձեւուած, անոնց ուղղութեան կը հետեւէին անխտիր։

Ժողովուրդը համակրեցաւ այդ գրականութեան։ Ո՛չ թէ միայն լեզուն հաճելի, մատչելի էր իրեն, այլ հրատարակուած հատուածները, թարգմանուած գործերը նոր բաներ էին իր աչքին, բոլորովին հեռու նախնի պատուելիական ճոռմարանութիւններէն։ Եւ ե՞րբ արդէն նորութիւնը, մանաւանդ գրականութեան մէջ, հրապուրիչ չէ եղած։ Միւս կողմէ, յաջորդող սերունդներն ալ, ինքնին միշտ ֆրանսերէն միայն ուսած, գրեթէ ասանց զգալու այդ հոսանքին խառնուեցան, ընդօրինակեցին իրենց նախորդներուն ուղղութիւնը, նոյն իսկ զանոնք գերազանցելով։ Տարբեր համեմատութեամբ մը՝ նմանօրինակ հոսանք մըն ալ թիւ կուտար մեր բարձրուն մէջ. թարգմանուած վէպերը, քաւթիշէ եղած հատուածները, աւելի պատշաճ, աւելի սեթեւեթեալ ու մեծփայլուն բարձր կը պարզէին մերիներուն աչքին։ Անոնք որ Ֆրանսայի մէջ ուսնելէ վերջ Պոլիս վերադարձած էին, ինքնին փոխուած. ֆրանսական բարձր ու սովորոյթներ իւրացուցած, առաջին քայլերը իրենք առին իրենց տան կարգն ու սարքը փոխելու համար։ Ամիրաներու նահապետական նիստ ու կացը վերցաւ քիչ ատենուան մէջ, սկսելով նոյն իսկ ա՛յն ատեններէն՝ որոնց հիմնարկութիւնը ցեղին աւանդութեանց հաւատարիմ գաւառացի ամիրաներ կատարած էին։ Ժամանակին գրականութիւնը կը քաջալերէր այդ փոփոխութիւնը. խօսելու, գրելու, վարուելու, մտածելու նոր ձեւեր ցոյց կուտար ամէն օր. նորածին տղան իսկ չա՛տ հեղ ֆրանսական անունով կը միջտուէին, Քիչ առ քիչ այս փոխանցումը աւելի շեշտուեցաւ. պարահանդէս, նուագահանդէս, թատերական ներկայացում, երեկոյթներ, եւայլն սովորական բաներ դարձան Պոլսահայոց համար։ Աղջիկները, իրենց կար-

գին եւրոպական , մասնաւորաբար Ֆրանսական կրթութիւն մը սկսան առնել , խնամութիւններ հաստատուեցան Ֆրանսացի ընտանիքներու հետ , — ինչպէս օրինակի համար Տիկին Տիւսար փաշա , — եւ մեր դպրոցները , — որոնց մէջ Ֆրանսերէնը միշտ իբր միակ եւրոպական լեզուն կը մնար , — գրեթէ առանց բացառութեան Ֆրանսական ուսուցման կերպերով ու գիրքերով շարունակուեցան :

* * *

Ինչպէս կը տեսնուի , Ֆրանսական գրականութեան ու բարձրեւուն Պոլսահայ համայնքին վրայ ունեցած ազդեցութիւնը կարծուածին պէս առանց պատճառի , անխմտ ու անբարենչի չէ : Պայմանները՝ զորս վերը պարզեցի իրենց ընդհանուր գիծերուն մէջ , ուրիշ ո՛ր եւ է համայնքի մէջ ալ նմանօրինակ փոփոխութիւն մը պիտի կրնային առաջ բերել , Գրականութեան մասին մասնաւորապէս ցարձակապէս անկարելի էր Ֆրանսական ազդեցութեան խուսափումը . եթէ դէպի Ֆրանսական գրականութիւնը այդ աստիճան ուշադրութիւն դարձուած չըլլար , եթէ անհամար կան թուականներու մեր գրականութիւնը գոյութիւն իսկ չպիտի ունենար : Եւ չիտակը չեմ ալ կարծեր որ Ֆրանսականին տեղ ուրիշ գրականութիւն մը պիտի կրնար նոյնչափ ողբերկ ու խանդավառ ազդեցութիւն մը ընել մերինին պէս առկա խաղ , անուս ու զարգացումէ զուրկ համայնքի մը վրայ :

Այդ պայմաններուն մէջ ծագում առնող գրականութեան շարունակութիւնն է անհանձն զոր Ռենք կ'ընենք այսօր . ուղղութիւնը չէ փոխուած առաջին օրէն մինչեւ հիմայ , եւ հաւանական ալ չէ՝ որ փոխուի ասկէ վերջ : Ինչ որ ժամանակին Ֆրանսական գրականութեան ընդօրինակուած էր , այսօր ա՛յն աստիճան նոյնացած է մեր ըմբռումներուն ու դիտելու եղանակներուն հետ , որ պարզապէս ցեղային յատկանիշի պէս բնական բան մը դարձած է : Մեր նախորդները դիտակցարար փոխ կ'առնէին բացատրելու կերպեր , դատողութեան ձեւեր , ոճեր , ասացուածներ , բառեր եւ ուղղութիւններ . այսօր , Ռենք , այդ միեւնոյն բաները ըրած ատեննիս եր-

բեք չենք զգար անոնց օտարաբի բնայթիւ մեղի անա՛նի կու գայ թէ այդ փոխ առնած բառերը , ուղղութիւնները , դատողութեան ձեւերը , ոճերը եւայլն , իսկապէս հայ բաներ են , եւ թէ իբր մերը կը գործածենք : Այս հանգամանքը ալ անկարելի է որ վերահայ Պոլսահայ գրականութեան ու գրողներուն վրայէն . ո՛չ մէկ բան կրնայ օգուտ մը ընել , ո՛չ մէկ հակազդեցութիւն կրնայ տարբեր հոսանք մը առաջ բերել : Չեմ ըսեր թէ փոփոխութիւններ չեն կրնար ներմուծուիլ . նոր մէջ , չեմ ըսեր թէ այս կամ այն գրողը չի կրնար տարբեր ուղղութիւն մը ստեղծել . փորձեր ընել , բայց վերջապէս ի՞նչ կրնայ ըլլալ առոնցմով . արդիւնքը չա՛տ մակերեսութային բան մը պիտի ըլլայ միշտ , եւ չպիտի կարենայ խախտել բուն իսկ հիմը , որ զուտ Ֆրանսական գրականութեան ոգոտը չաղախուած է :

Կը մնայ գիտնալ թէ Ֆրանսական գրականութեան ու բարձրեւուն Պոլսահայ համայնքին վրայ ըրած այդ ազդեցութիւնը իրապէս միասակա՞ր եղած է , ինչպէս կը ջանան կարծեցնել , Ատիկա յաջորդ յօդուածով :

ՄԷԼՍԷՏԷՍ

ՔՔՔՔՔՔՔՔՔՔՔՔ

Տարի մըն ալ՝ շիր առ շիր՝
Հե՛տ՝ օր առ օր՝ սահեցաւ .
Յուս մ'այն օրէն՝ ուր մեր սիրս
Զգաց սիրոյ ցունցն անբաւ :

Կը խօսէի խանդով բունդ ,
Կը լափէի բաւերդ բոց ,
Ու ետքեանց խո՛ր անդունդ
Զգոյի սերդ վերդ ճնոց . . . :

Համբոյր մը մեղմ քեզ գաց ,
Ծրքունքդ լուրջ , հպարտ , վեհ ,
Հոգիս հաւաքի քրքուց
Այդ հպումով հրակեզ :

Թարգմ. Ե. Գ.

ՅԱՊԻԿՃԻ ԱՐԹԻՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

—>❧<—

Այն կիրակի առաոռն , Ս . . Ի եկեղեցիին մէջ թ . . . եպիսկոպոսը պատարագ կը մատուցանէր : Եկեղեցիին տօնախմբութիւնն էր Սոփրականէն շատ աւելի ճրագներ , ջահեր ու ճառեր կը պայծառացնէին սրբավայրը : Ծաղիկները առատագոյն , խունկերը աւելի առաջարկող , սպասները եւ հանգերձները աւելի ճոխ : Ոսկին , զմրուխտը ու յակինթը , ամբինալ սփռոցներն ու վարագոյրները , ու լաւրաւները , խալտաճամուկ գորգերն ու թոցները , նորութեամբ ճաճանչագեղ արեւմտեղ քուրվառները տաճարը ակնախաղիկ հալոյ ակնատուփ մը կը յօրինէին , որուն մէջ խոռոչի խոռոչ վարկպարտի խոռոչ մը ըլլար իր գոհարները դիւթական քմահաճ պարիկի մը անխնամ ձեռքը :

Քահանաները գոհ ու հպարտ կերպարանք մը ունէին . . . օրը ապահովագէտ իրենցն էր : Պատարագամատոյց կղերականը , որ տեղացի էր եւ հրաւիրուած էր այդ օրը , սեւ վերջին տակէն արտախալով ճերմակ աչքերը խնայած , խօսելիք քարոզին տաղձները իր յարգարէր , յօրինուածը կ'օրոճար ու կ'աւազէր :

Պարոն Արթինը գործի վրայ էր : Դպիրներուն իրենց շապիկները կը բաշխէր , չորս տղերու վրայ հաստատուած շատ բարձր ու երկայն սնտուկի մը մէջէն հանելով , հարեւր անգամ ընդարձակ կափարիչը բանալով , գոհով , իրենց շապիկէն դժգոհ անառակ աղոյց երեսը անաչառ նայուածքի մը խորազանովը անդիկով , անդադար , անհանդիստ , երեսուն , մարմինին վրայէն առանց շապիկի հագած , հնութեանէ ճերմկած սեւ վերարկուն թիկնոսկիները անօթի դոմէշի ողնալոյս յետքերն պէս ցցուած , գարշապարները խոլ եւ կրունկներուն չոր ու փոթ փոթ միջին դեղինը ցուցնող բուրգէ գորշ ճերմակ գլուխներովը՝ հակառակ ամառուան եղանակին , մարմինին ու կոշտ կտաւին հպումին պատճառած մարմաջէն ուսերը յաճախ վար

ու վեր շարժելով , մեծ մասամբ ճերմկած ցախ մօրուքը երկայն ու կարծր եղունգներովը քերելով :

Շապիկէն Արթինը — այսպէս կը յորջորջէին դպիրներուն հանդերձագահը — այն օրը շքեղութեան մէջտեղ տեղաւթիւն մըն էր , երկնքի պայծառութեան մէջ յանկարծ ինկած մութ ամպ մը , արծաթ սկուտեղի մը մէջ չէս գիտեր ուրկէ թափած կունտ մը ցելս , աղեճմիկ կական մը յեղակարծ բարձրացող հարանիքի մը ուրախութեան մէջտեղ :

Եւ արգարեւ Արթին լացն իսկ էր : Տղաքները , չարաճճիները , «նանէյով իլիմոնի խապուխը» կը կոչէին զայն իրենց մէջ , Ուրիշներ , շատ սակաւաթիւ , որ անոր սրտակեղք պատմութիւնը պիտէին , տեսակ մը յարգալից կարեկցութեամբ կը նայէին անոր վրայ , մանաւանդ երէցները որ կը յիշէին անոր առջի վիճակը :

«Նանէյով իլիմոնի խապուխը» իր աղետալի պատմութիւնէն բուսած մէկ բառն էր , զոր կը կրկնէր երբեմն , առանձնութեան մէջ , անոնց որ համակրութեամբ ու կարեկցութեամբ իրեն կը մօտենային :

— Աղբա՛ր , մէկ նանէյով իլիմոնի խապուխը չըրի՞ն . . . որ աղէկնար :

Ութ տարի առաջ հողը զրած էր իր մէկ հատիկ աղջիկը , Սուրբիկը , տաանընթեղ տաբեկան : Հայրը , կարծելով որ կուրծքի հարբուխի պէս բան մըն էր իր գաւկին ունեցածը , եւ մաքէն անգամ չանցընելով այն սոսկալի արիւթին գոյութիւնը որ հիւժեղու հակամէտ այնքան մատաղ էակներ գերեզման կը տանի , տանը մէջ եղողներուն ըսած էր որ անանուխով եւ կիտրոնի կեղեւով մըտպուխ մը պատրաստեն ու տան հիւանդին : Կինը , քովը գանուող ուրիշ քանի մը կիներ , քիթ բերան ընելով անպին դարձած էին : Կիտրոնի մտպուխ , չիտակը աղուո՛ր գեղ . խեղճ աղջիկը օր օրի կը վատէր կ'երթար կոր , ու լեմոնի կեղեւով պիտի աղէկնա՛ր :

Ահա ասոր համար էր որ , երբեմն , ինչպէս ըսինք , անվրէպ երեւակայուած դարմանի մը անվաարելի խորհուրդովը տանջուած , ութ տարիներ վերջը առջի օրուան պէս կը կրկնէր դառն փպիտով մը՝ իրեն կարեկցութեամբ մօտեցողներուն :

— Մէկ նանէյով իլիմոնի խապուխ ընէ-
ի՞ն նէ . . .

Ու այդ Ժպիտին մէջ արցունքներու ան-
հունութիւն մը կար . ու այդ բառերուն մէջ,
որ աւելի հծծուած էին քան թէ արտասան-
ուած , անուշ սրտմաշուքի մը շունչը կար ,
երկար տարիներով բաղձացուած ու վերջա-
պէս կորսուած անհետացած բանի մը մօրմոքը,
թերի իմն անթեղուած կրակի մը տաքու-
թիւնը :

Այսպէս , երբ այն առաւօտ ներսը , խո-
րանին վրայ ակնարկ մը նետելու միջոց մը
ունենար , կը մոռնար իր գործը , անհետա-
ցածը կը յիշէր , արցունքներ կը սքողէին
նայուածքը , առանց հոսելու . տղաքները ,
« չապի՛կ » կը պոռային . չէր լսեր : Անդին էր
Բայց պահարանին մէջ կեցող քանի
մը լուրջ անձեր , որոնց մէջ կեցած էին նաեւ
Թաղական Խորհուրդի անդամները , Թորոս
աղան , Մկրտիչ Էֆէնտին , Տիրան Էֆէնտին ,
սկսած էին անհամբերութեան նշաններ ցոյց
տալ չապիկճին չրջապատող խնդրարկուններուն
ընթացքէն :

Երբ վերջապէս Արթին կրցաւ լսել , ասդին
դարձաւ , աչքերը չթափուած արցունքներէ
այրած մրկած , եւ սկսաւ դարձեալ երերալ ,
բանալ , գոցել , չապիկները հանել , տալ ,
նետել , փայտէ խարխուլ մեքենայի մը խեց-
բեկ շարժումներով , գորշ կապոյտ երակները
ձեռքերուն խորշումած մագաղաթին վրայ ու-
ռենալով , ծռելով , կանգնելով , երթալով ,
գալով :

Տարեց ու թաղական աղաները , որ պո-
հարանին պատկառելի լռութեանը մէջտեղ
չապկապահին տարօրինակ իրարանցումնե-
րուն վարժուած էին , քիչ մը արգահատանքէ
եւ քիչ մըն ալ ակնածութենէ արդիւրած ,
զիտողութիւն բնաւ չէին ըներ , եւ կը պա-
հէին իր բարձրութեանը մէջ մեծարոյ անձե-
րու իրենց անվրդով եւ հպարտ ջերմութեան-
դութիւնը , սպասելով պնակ պտտցունելու
հոգեբանական վայրկեանին , ո՛րը խաչակնքե-
լով , ո՛րը երգասացութեանց ընկերանալով
դաշն , անլսելի միթմիթանքով , դէպ ի ներս ,
տաճարը հազուադէպ նայուածքներ արձակե-
լով դուռնէն կամ պատուհաններէն :

Այդ թաղականներուն մէջ , մէկը մանա-
ւանդ , ասեղնապետը , պարոն Արթինի անձա-
ռւ անպատշաճ պաշտօնավարութեան մասին
դժգոհութեան դերապանց պատճառներ ունե-
նալով հանգերձ , ներողամտութեամբ կը
վարուէր անոր հետ , եւ նոյն խել իր ընկե-
րակիցներուն՝ Ժողովի մէջ այդ մասին ըրած
զիտողութեանց բերանը կը գոցէր , առարկե-
լով չապկապահին անկեալ վիճակը , տնան-
կութիւնը : Միւսները քիչ մը գիտէին որ
Թորոս աղան ուրիշ պատճառներ ունէր Ար-
թինի նկատմամբ թոյլ գտնուելու . բայց այդ
պատճառները ընտանեկան ներքին ու նոր
հանգամանք մը ունէին , եւ զիւրին ու հա-
ճելի բան չէր գէշ մարդ ըլլալ Թաղակա-
ն Խորհուրդի ատենապետին հետ , որ հարուստ
անձնաւորութեանց մէջ մէկէ աւելի բարե-
կամներ ու պաշտպաններ համբերու առաւե-
լութիւնը ունէր : Գիտէին , օրինակի համար ,
որ Թորոս աղան , հակառակ իր զիրքին բար-
ձրութեանը , յաճախակի այցելութիւններ
կուտար Արթինի տունը , եւ թէ այս վեր-
ջինին ամուսինը , քառսունը նոր անցուցած ,
այն կիներէն մէկը զոր ուրիշ կիներ աղուորիկ
կ'որակեն՝ ազուրը ըսելու անհանգստութենէ
ազատելու համար , արդուելու , կարելու
կարկտելու վերաբերեալ մանր մունր գործի
կարգադրելու համար , պարբերաբար կ'ի-
թար ատենապետին տունը , որ զիւրակիկ
ճանչցուած ամուսին մըն էր , միակ սպասա-
ւորով մը որ միանգամայն իր խոհարարն էր :

Այս յարաբերութիւնը , գաղտնի չըլլալով
եւ գաղտնի չըլլալուն համար , անպատեհու-
թիւն մը ըլլալէ կը դադրէր , մանաւանդ թէ
տասնէն աւելի տարիներու կերպով մը նուե-
րագործած ընդունուած կացութիւն մը կը
ներկայացնէր : Չար լեզուները կրնային ու-
ղածնուն չափ իրենց բարբառնջանքները ծա-
մել մութին մէջ . ոչ իրեն եւ ոչ իրեն պատ-
պանեալին , պարոն Արթինին քով օր մը
օրանց եկող մը , բան մը ըսող մը չկար , ու
չպիտի ըլլար : Եւ այս ամէնուն մէջ կարեւո-
թէ չապկապահն էր միայն որ բան մը չէր
գիտեր , բան մը չէր լսած : Եւ իրաւ ալ ,
մէկ հատիկ սիրական աղջկանը երկարաժե-
հիւանդութիւնը եւ վերջը կորուստը գտցես

անոր միաբեր ընկճած եւ բանականութիւնը ընդարմացուցած էին, եւ եթէ երբեք ասուեալ նպատին փոյթեալութիւնը իրեն անբացարկի երեւցած ալ էր, իր հոգեմաշ կըսէին, ամէնուն յարգած անձի մը պատուաւորութեան զժուարայազութիւնը գաղափարին հետ միանալով, որ եւ է ուրիշ կիրք քննուցած էր իր մէջ :

Եկեղեցին, տունը, աստիճան, անդին, բան չէր երեւար աչքին : Մտասոյզ եղած էր անխնայի գաղափարի մը մէջ, եթէր կամ ուր տարիական աղջկանը պատկերը որ իրեն ներկայանար, ճերմակ զգեստներով, մաշկուն խոպոպիքները պարանոցին շուրջը թափփում, ջութակի գոյն կիսակօշիկներով, թեթեւ, շղարչակերպ գլխարկ մը արուոր հաւփալի մը նման գլխուն վրայ հանդած : Այսպէս տեսած ու սիրած էր իր աղջկը քանի քանի անգամ, ծովեզերքին մօտ զրօտավայրի մը մէջ, ուր գիւղին շատ մը ընտանիքները կ'երթային եւ ուր ինքն ալ կ'երթէր ու զակին հետ երբեմն կ'իրակի օրերը կ'երթար քանի մը անտրոսելի ժամեր անցընէր :

Եւ երբ կը յիշէր տարուէ տարի անոր մեծնալը, զարգանալը, անոր անուշ բառերը, զորով արտայայտութիւնները, հօրը սիրտը իր ճիւղումէր :

Շատ անգամ, իրիկուան մօտ, գիւղին կից բլուրին վրայ կը բարձրանար, ուր կը տարածէր գերեզմանատունը, այգիի մը վերին : Հոն, առանձին, չորս դին նայելէ վերջ՝ ապահով ըլլալու համար որ զինքը յիշող մը չկար, վերաբերուն կոծակները կը քակէր, ձախ կողմը ներքնակտաւին գնդաւանդով վարսուած ճերմակ զգեստի մը կը հանէր, կը ծնրադէր, լաթի կտորը քովը քրած, իր ձեռքովը յօրինած եւ ծաղկներ անկած հողակոշտի մը վրայ խոնարհած : Այդ զգեստը ուրիշ տարու աղջկանը մաշած զգեստին էր, զոր օր մը ծրարի մը մէջ տեսած ու կնոջմէն ուղած եւ առած էր :

— Աղջիկ, Սուրբիկ, կը խօսէր հայրը խոստոված, լացող մանուկ մը համոզել ջանալով ծնողի մը համբերութեան ժպիտովը, եկեր եւ . . . Երջագետեղ, հոս է,

աղջիկ, կը յիշէր, ամառը, տաք օրերուն, իրիկուան դէմ, հոն . . . Անուշ դաւակ, ինծի հոս միշտակ ինչո՞ւ : ձգեցիր . . . Թէ որ դիտնայի թէ պիտի ձգէր երթայիր, ի՞նչ գիտնամ . . . այնչափ չէի սիրեր, պակասութիւն մը կը գտնայի քեզի . . . պակասութիւն չունէի . . . կը ստեղծէի . . . կ'ըսէի որ անխնային մէկն եւ, անգագ մը, որ հայրը չի սիրեր, անհոգ է ծնողքին համար . . . կը խաբէի ինքզինքս . . . : Այս եղածը մտքէ չէր անցնէր . . . մէկէն ի մէկ բան մը եղաւ . . . : Ախ, հոգիս գետնին քարերուն տակ, գետնի քարերուն, որոնց ոտքովը գալիլէն կը վախնայի, որ չըլլայ թէ ցաւի : Հողերուն տակ, դաւակ, ձիւնին, անձրեւին, բուքին : Գիտե՞ս, իրիկուն մը, տասը տարեկան էիր, Սուրբիկ, վար ինկար, գլուխդ ցաւեցաւ . . . մայրդ լաթով մը կապեց . . . լացիր . . . : Այն գիշերը մինչեւ առաւել քնացայ, լացի, աղջիկ, կամաց կամաց քովդ կուգայի, վրագ կը ծռէի : Դուն քնացար . . . ես չկրցայ քնանալ : Աստուած իմ, հիմա ալ անանկ եղաւ . . . դուն կը քնանաս, ես չեմ կրնար, չեմ կրնար քնանալ . . . Երթալէդ ի վեր չապիկ չեմ հագեր, աղջիկ, մարմինս կը տանջեմ որ լմնամ . . . բայց չըլլար կոր : Միաքերնիք բերէք անգամ մը, չըջագետեղ հոս է . . . ան, Սուրբիկ, աղջիկ, դաւակ չկայ : Որո՞ւն մտքէն կ'անցնէր . . . ես մնամ պիտի եղեր . . . դուն հողին տակ . . . հողին տակ, աղջիկ . . . :

Ու Արթին հեկեկանքով կուլար, չորցած գանկը թաց հողին քսելով, զգեստը համբուրելով, սրտին ամէնէն խորէն աղաչելով Աստուծոյ որ երակ մը պայթէր լանջքին մէջ, ու հոն մնար, անոր մօտ, անոր հետ : Յիշողութեանը մէջ յուսահատութեամբ կը փնտռէր թէ ի՞նչ մեծ յանցանք մը գործած էր կեանքին մէջ որ չէր կրնար մեռնիլ :

Եւ այս ողբագին յիշատակներուն մէջ, չէր գծեր ան իր աղջկանը վերջին մէկ քանի տարիներուն ուրուագիծը, զոր մոռցեր էր, զոր չէր ուզեր կամ չէր կրնար ետ կանչել : Սիրահարած աղջիկը կը խուսափէր իրմէ : Ո՛վ գիտէ ինչ անպատկեր քառուի մը տեսակներ եւ . . . Երջագետեղ, հոս է,

կզմած էր, որուն կը գործակցէր թեքեւս նաեւ կնոջը անհաւատարիմ թեթեւաբարոյութեան պարագան: Տարտամ կերպով կը մտածէր որ այդ մէկ քանի տարիները Սուրբիկի արտին մէջ նոր-եւ տարապայման զգացումի մը մուտքը կը նշանակէին: Կը յիշէր երիտասարդ մը որ քանի մը անգամ իրենց գիւղը հիւր եկեր էր, երիտասարդ մը որ Թորոս աղային հետ վերջը գծաութեան պէս բան մը ունեցեր էր, եւ զոր Թաղական Խորհուրդին ատենապետը յաջողեր էր արգիւ լել Սուրբիկի ծնողքին ամուսնութեան առաջարկութիւն մը ներկայացնելէ: Եւ թէպէտ Սուրբիկ սիրած էր այդ դեռատի անձը, Վահանը, Թորոս աղայի մէկ հակառակութիւնը պատ քաշած էր, համոզելով Թագունի հանրմը, Արթինի կինը, համոզելով նաեւ այս վերջինն ալ որ այդ աղան անպիտանին մէկն էր: Ու Սուրբիկի ծնողքը չէին կրցած դէմ կենալ Թաղական Խորհուրդին բանիմաց ատենապետին առարկութեանը:

Արդարեւ Վահան՝ Թորոս աղայի անհաճոյ ըլլալու դժբաղդութեան արժանացած էր անոր դէմ ըմբոստ ընթացքովը, մինչդեռ գրեթէ ամէն մարդ կը համակերպէր անոր: Վահան, գիւղէն չըլլալով, համարձակած էր, անգամ մը որ իր սիրայն արգելք ըլլալու եղած էր Թորոս աղան, որ մը կամաց մը անոր երեսին տալու անոր դիւրակեցութեան կնճռոտ գազանիքներէն մէկ քանին, թաղային գործերու մատակարարութեան մէջ բաւական ժամանակէ ի վեր անոր գործած զեղծումները, ժառանգութեան մը խնդիրը զոր Թորոս աղա, մէկ երկու սուտ վիճաներու օգնութեամբ, յաջողած էր իրեն նպաստաւոր կերպով լուծելու, ի վնաս օրինաւոր ժառանգորդին որ չապկապահին ընտանիքն էր:

Ժառանգութեան այդ գործը իրաւ է որ քիչ մը հինցած ու դժուարակընձիւ գործ մըն էր, եւ Թաղական Խորհուրդին ատենապետը յաջողած էր Արթինը ու անոր կինը աղահովցնել թէ այդ մասին կարելի եղածը ժամանակին պիտի կատարէր: Կարելի եղածը կատարած էր. բայց, պտուղը քաղելէն վերջը, կամաց կամաց ինքը ճաշակած էր քայն. ժամանակ վրայ անցած եւ սպասումի

սրտմաշութիւն վրայ ալ զով ջուր լեցուցած էր: Ու հիմա՝ ալ եւս խնդիր չկար: Միայն թէ, այս գործին արձագանքը, ինչպէս գրեթէ միշտ, տեղին վրայ ձայն չտալով, հետունքը քիչ շատ զգալի եղած եւ մինչեւ Վահանի ականջին զարկեր էր, թէ եւ շատ խուռ ու տարտամ:

Ատենապետին զայրոյթը, Վահանի ամբարաւանութիւնը պատժելով, Սուրբիկի ալ զարկած էր, ինչպէս որ կոխի մէջ մէկուն գլխուն կշռուած հարուած մը կրնայ անոր քովին զլսուն ալ հանդիպիլ: Վահան ալ չէր կրցած իր սիրականին գիւղը ոտք կոխել զանազան արգելքներու առջեւ, որոնց մէկ կրնար համարել ատենապետին խորհուրդներուն մշտահլու Արթինի եւ իր կնոջ գոված ականութիւնը եւ երես չտալը:

Սուրբիկ, մանկան մը պէս որուն աղոտ պէպէքը ձեռքէն կ'առնեն ուրիշի կուտան, արտէն զարնուած, հիւանդացած էր:

Վահանի անձին գալով սակայն, կրնանք հաւատաւոր որ Սուրբիկին շատ արժանի չէր: Շապկապահին աղջիկը փափուկ, զգայուն ու միամիտ հոգի, չճանչնալով համակրած էր, ու վերջը հրաշքով սիրած: Բայց Վահան աւելի նւթական շահու ակնկալութեամբ ճամբայ ելած էր, ակնկալութիւն զոր մոլորած ժառանգութեան մը օրինաւոր տէրերուն պատահական վերադարձը կ'արդարացնէր, ու կը կեղծէր:

Վահան, իր գիւղին մէջ, շատ պարկեղտ ու պատուաւոր երիտասարդի համբաւ չունէր: Դատարկագորտ էր: Չենք ըսեր բոլորովին, այլ քիչ մը կը պատկանէր երիտասարդներու այն նմոյշին, որոնցմէ ամէն տեղ մէկ կամ երկու հատ անպաւանառ կը գտնուին, որ, շատ անգամ տէրաէրի աղու հովեր մը ունին եւ իրենց եղած գեղին մէջ ամէնուն ծանօթ են իրենց. . . ունայնութեամբ, որ անպատճառ խելքէ, մտքէ չանցած, անկարելի անունի մը կը պատասխանեն, օրինակի համար, Պիտար, Կոտն, Ճիւլան, Միւսոն, կամ Պիմէն, որ լաւ հագուելու միջոցներ չունենալով՝ միտ լաւ կը հագուին, շնորհիւ այս ինչ կոչկալաւրին, կամ այն ինչ գդակավաճառին, կամ դերձակին հետ եղած կնճռոտ ու շատ ան-

քամի անխոստովանելի հաշուընթացներու , որ հանելի գլուխ մը կը կրեն իրենց ուսերուն վրայ , եւ որ քառասունը անցուցած եւ զեղեցիկ կին ունեցող ամուսինները չափէն աւելի անուշ ժպիտով մը կը բարեւեն :

Սուրբիկի կտրածքը քանի քանի անգամ այնպէս բարախած էր սակայն Վահանին ներկայութեանը , որ կարելի է ենթադրել որ , եթէ Վահանին առաքինութեանց թեթեւ քանակը ճանչցած ալ ըլլար , սիրտը անոր պիտի տար , մանաւանդ որ անոր հետ միութիւն մը պատճառ մը պիտի ըլլար հաւանորէն հօրեւնական տունէն իր հեռացման , որուն մէջ բաւական ժամանակէ ի վեր սիրտ կոտորելու քանդակը կը դառնային : Քանի ժամանակէ ի վեր , խնդը աղբիկը , թէեւ բոլորովին միամիտ , ինչպէս ըսինք , նշմարած էր իր մօրը եւ Թորոս աղային զժուարամեկնելի հաղորդակցութիւնները : Մայրը անհոգին մէկն էր ապահովապէս , թեթեւ մը : Ողորմելի աղբիկը մայրը չափազանց կը սիրէր անոր բանալու համար իր անհանգստութիւնները , եւ Թորոս աղան , ինչպէս որ մշակած էր Արթինի վերաբերող ժառանգութիւն մը , կը մշակէր երկար ժամանակէ ի վեր , անխափան սնարգը , նաեւ անոր ամուսնոյն բարեկամութիւնը :

Ու հիմա , այս ամէնուն մէջտեղ , երբ Սուրբիկ այլ եւս գացած էր , ու Արթին , գործերուն անփոյթ , ինքզինքէն դուրս , ամէն բան թողուցած , կ'ընդ մոռցած , ամէն բանի վախճանին սպասելու աղեճմիկ զիրքը բռնած էր , թաղական խորհուրդի ատենապետը , տունը ապրեցնելու համար , երեք հարիւր զրուշ ամսակաճով չապկապահի պաշտօնը յանձնած էր անոր :

Այսպէս կարգադրուած էին գործերը , եւ որովհետեւ Արթին , օրէ օր աւելի ինքզինքը թողուցած , վրան զրուրդ պատռտած , անխափ , դասալիք , կը շրջեցնէր արեւին տակ իր եղիկի գոյութիւնը , եւ իր կնոջն ալ , Թորոս աղային ալ յաճախակի յորդորները անպտուղ մնացած էին , համակերպեր էին թող ալ որ թշուառ հայրը անսահման անձկութեամբ անոր քովը երթալու վայրկեանին պատէր :

* * *

Անոր համար է որ հիմա , պատարագի միջոցին , երբ սարկաւազներն ու դպիրները , սեղանին ճիշդ տեղերը չարուած , սկսան սուր խաղերով հնչեցնել «Ձերգո հոգեւորա»ը , ծնծղաներուն , քչոցներուն , բուրվառներուն շփոյղին , խուկեկու թանձրամած կապոյտին մէջտեղ , պրիսակներուն մէջէն մաղուելով իջնող արեւի ճաճանչի մը լայն փողին յօրինած ծիածաններուն մէջտեղ , ճառերուն , կանթեղներուն մէջտեղ որ ցնծութեամբ կը նշողէին , ճերմակութեանց մէջտեղ որ երկրաւոր չեղող բնակարանի մը ցոլացումով կ'ապրէին , սիւնադարձ հինաւորաց անդաստանի մը բովանդակ զիւթիչ չքեղութեամբը ողողուն , Արթին , ընկուզենի բարձր արկղին կրթնած , ապշած նայուածքը պահարանին պատուհանին ձողերէն ներս խորանին վրայ եղածներուն սեւեռած , մոռցած ամէն բան , քանի մը աղաքներն ալ որ չապիկի կը սպասէին , յետամնաց սարկաւազ մըն ալ որ ի դուր չապիկ մը կ'ուզէր իրմէ , խուլ , անզգայ վերացած , անխիթացած , անէացած , այդ աղմուկներուն , այդ բարբառներուն հոսանքէն ի քարշ վարուած , այդ շողիւնին մէջը , ետին , վրան , յետ մահու գոյութեան մը դրախտը բաց աչքով տեսնելով , ակնյայտի նշմարելով իր զաւակը որ հոն էր , հրեշտակներու մէջտեղ , լոյսերէ պաշարուած , ծաղիկներու ու լուսափաղփ խուկի ամպի մը մէջ խեղդուած , զինքը կանչելով , Արթին կը դողար , գոսացած երթացած մարմինին տակ ծռուկած սրունքները կը խուսափէին , կը զգար որ իր գոյութիւնը կը հալէր , եւ յետարանը եթէ չըլլար , պիտի կործանէր :

ՅՈՎԶ. ՍԵՅԵԱՆ

Բերկրուքեամբ կը ծանուցանենք թէ , Մանգուսեի Էփեփար եւ Սուրհանդակ օրաթերթերը , կարճատեւ դադարումէ մը ետք , հինգշաբթի առաւօտէն վերսկսան հրատարակուիլ՝ արտօնութեամբ Տպագրական Տեսչութեան : Նոյնպէս Փոռնջ լրագիրը :

Տոք. Եղուարդ ԷՖ. Մասիս Բերայի Թաղ. Խորհուրդին անդամ նշանակուած է Տոքթ. Դաւիթեան Էֆ.ի տեղ որ վերջնապէս Բարիդ հաստատուեր է :

ԼԱ ՓԻԱՁԱ

(Բ. եւ վերջին մաս)

Ութսուններէ կանգուն երկայնութիւն եւ յիսունըվեց կանգուն լայնութիւն ունի Ս. Մարկոսի տաճարը , եւ յունական խաչի ձեւը : Քայլ առ քայլ ու լռիկ կը յառաջանանք՝ կանգ առնելով մոզայիքի մը , կիտուածի մը , սիւնի մը , արձանի մը քով , մինչեւ որ կը հասնինք չքնադադործ աւագ խորանը , որ կը կենայ կանանչ քարի ամպովանոյ մը տակ՝ մարմարեայ քանդակաւոր չորս սիւներով վերամբարձ : Արծաթի ու ոսկւոյ տախտակներու վրայ մեծագին գոհարներով ընդկուզեալ է սոյն խորանին պատկերը , Պոլսոյ արուեստաղէաներուն ձեռամբ պատրաստուած ԺԲ. դարուն սկիզբը : Իր արժէքին մասին յիշուած գումարը , եթէ յիշողութիւնս չի խաբէր զիս , այնքան առասպելական ու անհաւատալի է , որ չեմ համարձակիր կրկնել զայն հոս : Ստոյգ է թէեւ թէ վենետիկցիք իրենց ամէնէն յաջող ժամանակները , դարերու ընթացքին մէջ , ո՛չ զրամ խնայած են եւ ո՛չ աշխատանք անհման ընծայելու համար իրենց պաշտպան Սուրբին այս նուիրական բնակարանը : Այս մեծածախ պատկերը սովորաբար ծածկուած է վարագոյրով մը որ միայն մասնաւոր առիթներով կը բացուի :

Շէնքին չուրջը բաւական բարձր նրբանցք մը կայ , ուրիշ աւելի մօտէն ու մանրամասնօրէն դիտելու համար մօղայիքները , կ'անցնինք լռիկ ու պատկառ , մինչ մեզմէ վար՝ խորանին առջեւ՝ աղօթքներ կը մըթմթայ քահանայ մը , եւ երգերու ու երգեհոնի գոռ ու ներգաշնակ մեղեդիներն ալ արձագանգ կը գտնեն անկիւնէ անկիւն :

Ժամեր կ'անցընենք հոս : Ամիսներ անցուցած են հոս ուրիշներ , եռանդուն մասնաղէաներ , եւ հատարներ յօրինած՝ նկարագրելու եւ գրուատելու համար այլեւայլ մասերն այս անդուզական տաճարին :

Դուրսը , հրապարակին մէջ մեծափառլթամ վաճառատուններուն մէջ հաճոյքով կը դիտենք գունաւոր լուսանկարներու , գեղեցիկ պատ-

կերներու , եւ այլ գեղարուեստի ցուցադրութիւններ , վենետիկի ապակիին համաւը մանաւանդ ի վաղուց անտի տարածուած է ամէն կողմ : Այս հրապարակին մէջ կը գտնուի ալ ապակիի նշանաւոր դործարաններէն մէկը , կ'այցելենք ամէն կողմ . դործաւորներուն աշխատութիւնը կը տեսնենք . իրենց արտադրութեանց վրայ կը սքանչանանք : Մեզ յարկանք մը ընելու համար մեր ներկայութեան խօսքունաւոր ապակիէ զարդեղէններ կը շինեն եւ տուփիկներու մէջ դրած մեզ կ'ընծային իր շատակ մեր այցելութեան :

Հրապարակին արեւելեան կողմը եկեղեցւոյ մօտ կայ բարրաբերձ դռն մը , որ հասնողակցութեան մէջ կը դնէ Լա Փիաձան քաղաքին ամէնէն աւելի հարուստ խանութները պարունակող փողոցին հետ : Այս դռան վրայ կայ աշտարակ մը , ուր երկու պղնձ հակներ օրուան ժամերը կը հնչեցնեն զանգակի մը վրայ : Աշտարակին պահապանը ցոյց կուտայ ճարտար մեքենաները որոնց չորսիւսոյն հակաները կը կատարեն իրենց փափուկ պաշտօնը այնքան ճշգրտութեամբ :

Կարելի չէ Փիաձայէն անցնիլ առանց ուշադրութիւն դարձնելու նաեւ խուռներամ աղանձներուն , որոնք շէնքերուն անկիւններն ու ճեղքերը կը թափեն : Հին ատենները քաղաքին եկեղեցիները սովոր էին աղանձներ ընծայ զրկել Ս. Մարկոսի հրապարակին , Մաղկազարդ աօնի օրը : Պետութիւնը կը հոգար իր ծախքով այս աղանձներու բաղմութիւնը , որոնք հիմա սակայն կարօտ մնացած են մասնաւորներու ոգորմութեան : Ուրիշներու նման սիրայօժար կը մասնակցինք ոգորմութեան այս գործին :

Փիաձային հարաւային անկիւնէն մինչեւ ծովակը կը տարածուի ուրիշ հրապարակ մը , Փիաձէթան , որուն մէկ կողմը կը բարձրանայ կամարաւոր , հոյատեսիլ շէնք մը , դաստուը , որ ամբողջ Խալիօյ աշխարհիկ շէնքերուն ամէնէն շքեղներէն մէկը կը համարուի Միւս կողմէն հռչակաւոր Տօճերուն ո՛չ նուազ հռչակաւոր պալատը : Այս պալատին վրայ էր որ կառչած էին մեր հայեացքը նախապէս երբ առաջին անգամ քաղաքը նշմարեցինք : Եւ արդարեւ այնքան դիւթիչ են իր նուրբ ,

փափկածաշակ զարդերը , իր գեղական ճաշակաւ , իր բազմաթիւ մեծ ու փոքր կոթական կամարները , որոնք կը շարունակէր իրարու վրեւ , գունազեղ մարմարեայ ու ծիրանաքարէ շողշողուն սիւնները , որոնց խոյանկները տերեւներով , մարդոց ու կենդանեաց դէմքերով ճոխապէս պծնուած են . եւ ուրիշ այլազան հրաշալի քանդակները , որոնց արուեստին նրբութիւնն ու փափկութիւնը իր մանր չունի ամբողջ Եւրոպայի մէջ , կը յայտարարէ Ռեքսին , բոլորանուէր սիրահարը Վենետիկի :

Փառաշուք բակին մէջ ենք : Վերը բարձր պատուհանի մը մէջ մատնանիշ կ'ընեն բանտը Սիլվիոյ Բելլիքոյի , որուն վէպը ա՛յնքան յուզմամբ կարդացած ենք ամէնքս ալ (*) : Ուրիշ քանդակներէ ու քանդակներէ մեր հայեացքը կը դառնան դէպ ի պալատ առաջնորդող շքեղ տանգուլը որ « Հսկայից սանդուխտ » կը կոչուի , այն երկու հսկայ արձաններուն պատճառաւ որոնք իր երկու կողմերը կանգնած կը հսկեն երկու քաջարի , անքուն պահապաններու պէս :

Կ'անցնինք « Ոսկեղէն Սանդուխտ »էն , ուրկէ երբեմն կրնային անցնիլ այն առանձնաշնորհալ ազնուականները միայն որոնց անունները նշանակուած էին « Ոսկեղէն Գրքին » մէջ . իսկ այժմ ո՛ր եւ է երկրէ ու ո՛ր եւ է ցիւղէ ամէնէն խոնարհ անցորդին ոտքերն անգամ կը կոխտեսն զայնս արձակ համարձակ : Կ'անցնինք պճնաղարդ նրբանցքներէն , կը մտնենք ընդարձակ , պերճապայծառ սրահներուն մէջ , զորս Վենետիկի ամէնէն հռչակաւոր արուեստագէտները տարիներով , դարերով աշխատած են զարդարել իրենց բոլոր աշխուժովն ու հանճարովն : Հոս Տօմբուրու կենդանադիրներն , իրենց քաջագործութիւններն ու առաքինութիւնները անմահացնող տեսարաններ , հոն այլաբանական նկարներ , պատմական դէպքեր , որոնք Վենետիկի փառքն ու մեծութիւնը կը պանծացնեն : Հոս քանդակներ , անդրիներ , հոն դրուագներ , ոսկեզօծ առաստաղներ , փալիւլուն օրմեր , թանկագին , հազուագիւտ անօթներ , զորս համառօտիւ

իսկ յիշատակելու համար՝ ընդարձակ էջեր պէտք են :

Բայց այս փառքերովն ու պերճանքներովը չլանալէ վերջ՝ այցելուն յօժար չէ մեկնիլ այս վայրերէն առանց անպամ մըն ալ այցելելու այլապէս մեծահռչակ ուրիշ անկիւն մը , Հառաչանաց Կամուրջը , տիրահռչակն Փօնթէ Տէի Սօսփրիինի որ այնքան առատ նիւթ մատակարարած է քերթողներու երեւակայութեան ու զգացմանց , եւ անցորդն ալ չի կրնար առանց սարսուռի դիտել զայն :

Փրածձէթային մէջ ծովակէն ոչ հեռու կը տեսնուին երկու կրանիթէ սիւներ : Մէկուն գագաթը կը կանգնի Ս. Մարկոսի թեւաւոր խրոխտ առիւծը , միւսին վրայ՝ Ս. Թէոդորոս , վաղեմի Հանրապետութեան պաշտպան սուրբը , կոկորդիլոսի մը վրայ : Գլխաւոր մանց վայրն էր այս կրքեմն , եւ այժմ հոս է կօնաօղներու կեդրոնատեղին :

Ահա այս Փրածձային մէջ եւ այսպիսի չէնքերէ չըջապատուած՝ Ս. Մարկոսի դէմ առ դէմ աւելի քան տասը դարերէ ի վեր բարձրագլուխ կը կանգնէր համբաւաւոր Քամբանիլէն , որ ո՛չ եւս է , Թերթերն արդէն վերջերս մանրամասնօրէն նկարագրեցին թէ՛ չէնքը եւ թէ՛ իր անկման պարագաները : Աստիճաններ չունէր վեր ելլելու համար : Երբ իր ոլորուն անցքերէն դէպի գագաթը կը յառաջանայինք յամրաքայլ , մեր առաջնորդը մեզ կը պատմէր թէ Պօնաբարթ ձիով անցած էր նոյն տեղերէն , հետիոտն երթալու յոգնութենէն խուսափելու համար : Ո՛ւր որ ոտք կոխելու է այդ տարօրինակ մարդը , տարօրինակ պատմութիւններ թողած է իր ետին : Չեմ գիտեր թէ այս ալ այդ առասպելներէն մէ՞կն էր զորս առաջնորդները այնքան կ'ախորժին յիշեցնել , թէ իրական դէպք մը : Անգամ մըն ալ , մեզ կը պատմէր դարձեալ մեր առաջնորդը , երբ Անգլիացի մը Քամբանիլէն կ'ելլէր միայնակ , չարագործ մը կը հետեւի իրեն եւ վրան կը յարձակի զինքը կողոպտելու համար : Բայց ճարպիկ Անգլիացին իր արձանակովը կը սպաննէ զայն , եւ մինչեւ յատակը կը զլտորէ զիտապաստ : Այս ալ առաջնորդին գործօն երեւակայութեան արդիւնքն էր կամ ո՛չ , չեմ գիտեր : Սա ստոյգ

(*) Թարգմ. Կ. Ս. Իւթիւճեանի :

է թէ՛ արգիւում էր ո՛ր եւ է մէկուն առանձինն մտնել Քամբանիւղէին մէջ :

Առանձինն կը կանգնէր Քամբանիւղէն , եւ իր քառանկիւն զանգուածը օդն ի վեր կը սլանար աւելի քան երեք հարիւր քսան ոտք : Հրեշտակի մը կերպարանքը կը սաւառնէր զագաթին վրայ , պահապան հրեշտակն էր կարծես բոլոր չրջակայ շէնքերուն ու վայրերուն : Տեստարանն ալ այնքան ընդարձակ էր որքան փառաւոր : Յայնկոյս ծովակին ու քաղաքին կը տեսնուէին Աւպեանները եւ Փատուայի ու Իսդիրիայ լեռներն ու Ազրիականի մէկ մասը :

Քանի մը Ամերիկացի բարեկամներ , որոնք Վենետիկ կը գտնուէին այս ամառ , այնպէս պատահեցաւ որ տեսան Քամբանիւղէին անկումը : Ո՛չ թէ Քամբանիւղէին ինկաւ , կը գրեն , այլ ինքն իր վրայ կծկըտեցաւ խաղի թուղթի տրձակի մը նման : Եւ ինչ որ երբեմն Լա Փիաձձայի մէկ գլխաւոր զարդն էր , այժմ միայն աւերակներու բուրդ մըն է յիսուն կամ վաթսուն ոտք բարձրութեամբ եւ աւելի քան հազար ոտք չրջադիւծով :

Ո՛չ ոք որ հիացմամբ եւ պատկառանքով նկատած էր այս հինաւուրց յիշատակաշունը , կրնայ առանց տխրութեան դիտել անոր ներկայ աւերակին խառնիխուռն կոյտերը . եւ զարմանալի չէ՛ որ աշխարհիս չորս կողմերէն , եւ ամէն դասակարգի անձերէ ցաւակցութեան արտայայտութիւններ ուղղուեցան Վենետիկ : Քամբանիւղէի այս տխուր աղէտէն այնքան օրեր վերջ , նոր աւերումներ անա կը գուժեն հեռագիրները , դարձեալ տարաբաղդ Վենետիկի մէջ , եւ կ'ըսեն թէ ժուղովուրդը սարսափի է մատնուած : Վենետիկի մեծ մասը շինուած է ցիցերու վրայ , որոնք ժամանակին քարայցած են կրակն : Արդեօք այս հիմերը տեղի՞ տալ սկսած են , կը հարցնեն շատեր սարսափով :

Լա Փիաձձան ո՛չ միայն ամէնէն փառաւոր ու կարեւոր հրապարակն է , այլ նաեւ ժուղովրդեան նախամեծար ժամադրավայրը , եւ մանաւանդ ամբան իրիկունները , երբ կրակոտ արեւը կը խաւարի , եւ զինուորական երաժշտութիւնն ալ կը սկսի իր ամէնէն քաղցրալուր շնչտերը հնչեցնել , հոն կը դիմէ

խուռներում երկսեռ բազմութիւն մը ամէն հասակէ , սրճարաններուն առջեւ նստած պաղպաղակներով , ըմպելիներով զովանալու , շաղկերատելու , կամ լուսաշող վաճառատանց առջեւ , զիւթական կտմարներու տակ , եւ մարմարեայ սալայատակին վրայ ման գալու թեւ թեւի ու զուարթ :

Ու հոս , Լա Փիաձձային մէջ , Քամբանիւղէն ստուերին տակ , հանդէպ Ս. Մարկոսի առճարին եւ Տօճերու պալատին , եւ վաղիւրջ Ատենականաց բնակարաններէն չրջապատեալ հոս է աւելի քան այլուր որ անցերոյն յիշատակները կուգան խոնուիլ այցելուին մաքին մէջ : Ե. դարուն մէջ խել մը գաղթականներ իրենց զօրաւոր թշնամիներէն հալածական , կուգան այս մեկուսի կղզեակներուն մէջ ապաստանիլ : Բայց վերջապէս իրենց հաստատած քաղաքը կեդրոնը կ'ըլլայ ամբողջ Եւրոպիոյ վաճառականութեան : Դաղթականութիւններ կը հաստատեն արեւելեան հեռաւոր կղզիներու ու ծովագերքներու վրայ , եւ իրենց յաղթական դրօշը կը ծածանի շատ նշանաւոր քաղաքներու մէջ , մօտն ու հեռուն : Իր անհամար նաւերն իր դօղը կը բերեն թափելու աշխարհի հարստութիւնները : Իր նաւատորմիզը կը տիրէ ջուրիուն վրայ միահեծան : Ամէնէն զօրաւոր իշխանները կը պատկառին իրմէ , եւ մեծ պաթիկ կը համարին իր համակրութիւնն ու հիւրընկալութիւնը վայելել : Արուեստները կը ծաղկին , կը բարգաւաճին անմասն յաջողութեամբ , եւ իր նկարչութիւնը , ճարտարպետութիւնը , քանդակագործութիւնը , ագապիկգործութիւնն ալ աշխարհի հիացումը ու յարգանքը կը վայելեն . իր արուեստագէտներն առաջին դիրքը կը գրաւեն զեղարուեստից պատմութեան մէջ , Վենետիկ իրօք կ'ըլլայ դիւրոյն եւ գոհարն Ազրիականի :

Դարերը կը հոլովին , պարագաները կը փոփոխին , բայց աշխարհի ամէնէն յանդուցիչ , ամէնէն դիւթիչ ու վիպական վայրերէն մէկը պիտի մնայ միշտ Վենետիկ իր անցելոյն դիւցազնական պատմութեամբ , իր մեծափառ յիշատակարաններովն ու իր բնական եզական դիրքովը :

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ՌՕՄԷՆ ՏՕՐԻՆԵԱՔԻ ՌԻՂԵԴՈՐԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Դ. ԳԼՈՒՆ

Փախուստէն վերջ. — Երկպառակութիւն. — Տօմէնկօ կը սրդողի Շիքօրաբայի հետ. — Դաշոյնները մերկացած. — Օնօրիոյ միջամտութիւնը. — Երեք մարդ մեկանց գնալու. — Տօմէնկոյի բարկութիւնը. — Շիքօրաբայի ընկերները կերճ գիշակեր բռնողներու. — Արկածներ հեղեղատի մը շուրջը. — Ֆանպաւորաստից քաջատու մը որ գերեզման մը կը դառնայ. — Օնօրիօ կը վերադառնայ. — Տօմէնկոյի միջամտութիւնը. — «Կօջողները կը փախչին. — Ազատում. — Միշտ դէպի առաջ:

Առաւան փամբ չորսին մօտերն էր. Տաւր վայրկեան մը արշաւաստոյր յառաջացած էինք. կրք Տօմէնկօ պատուիրեց որ կենանք. Յետոյ, ձիէն իջնելով ականջը գետնին փակցուց, ու մօրիկ ընելէ վերջ ըսաւ.

— Ութը կամ տասը ձիաւորներ ինկած են Կետուս, բայց եթէ կարենանք Սալթօ տէլ Բառնէրօ հասնիլ, կ'ազատինք:

Կրկին ձի հեծանք եւ սկսանք յառաջանալ փառաղի վազքով մը. միայն թէ, մեզ հալածողները, լաւագոյն ձիեր ունենալուն՝ շարունակ տեղ կը շահէին մեր վրայ. Որոշ կերպով կը լսէինք իրենց ձիերուն դափբառքը:

Վերջապէս Սալթօ տէլ Բառնէրօ հասանք. հոգը հող երկուքի բաժնուած էր հեղեղատէ մը որուն վրայ երկու ծառի կոճղեր դրուած էին իրր կամուրջ. Օնօրիօ, Շիքօրաբայ եւ իր երկու բարեկամները իսկոյն անցան այդ անարեւատ կամուրջին վրայէն. Ես ալ իրենց հետեւեցայ. Այդ միջոցին, մեզ հալածողները բաւական յառաջացած ըլլալով հրացան կը դարձնէին մեր վրայ. Քանի մը գնդակներ առջիցին մեր շուրջը, բարեբաղդաբար առանց վնաս պատճառելու, Տօմէնկօ ամենէն ետ մնացած էր. Տեսայ որ մէջքէն հանեց շաժծօն (կրկար չուան մը՝ ծայրը բաց հանգոյցով) եւ ան կամուրջին վրայէն վազցնելով հանդերձ, շաժծօն հանգոյցը անցուց դայն կազմող երկու գերաններուն եւ հեղեղատին մէջ ձգեց զանք. Քիչ մըն ալ յառաջացանք, հրա-

յանի գնդակներէն ինքզինքնիս հետու պահելու համար. Երբոր կեցանք, շնորհաւորեցի Տօմէնկօն՝ իր ճարպիկ ընթացքին համար.

— Քուստ չեմ մեղքնար, ըսի իրեն, որովհետեւ պէտք եղածէն աւելի շահեկան պատահարներ անցուցինք. բայց ինչ կ'ուզէիր հասկցնել «ողջ մարդ մը պիտի թաղենք» ըսելով:

— Այս երկրին մէջ, պատասխանեց Տօմէնկօ, «ողջ մարդ մը թաղել» կը նշանակէ խաղի մէջ շահիլ մարդու մը դրամը, տունը, գոյքերը, հագուստը, եւ անոր թողուլ երկու աչքերը միայն. . . որպէս զի ուղածին պէս լայ:

Շատ չկեցանք այդ տեղ. մեր հակառակորդները կրնային հեղեղատը դառնալով միզի հասնիլ: Ծամբայ ելանք նորէն, ամենքս մէկ Միայն թէ, Տօմէնկօ ալ կը փափաղէր լքել Շիքօրաբայն, ինչպէս նաեւ անոր երկու ընկերները. Որովհետեւ Շիքօրաբայ որ խաղի միջնորդ եղած էր պահ մը առաջ, իր բաժինը կը պահանջէր. Ծամբան, կրկին առոր խօսքը բացուեցաւ. Շիքօրաբայ առաջարկեց որ Տօմէնկոյի շահած դրամը բաշխուի հաւասար կերպով, բայց Հնդկիկը ընդդիմացաւ. Քիչ առ քիչ սկսան վիճաբանիլ, ուրկէ վերջ Շիքօրաբայ եւ իր երկու ընկերները յարձակեցան Տօմէնկոյի վրայ. Իսկոյն առաջ նետուեցայ, կուռին միջամտելու համար, բայց հազիւ քանի մը քայլ առած էի, երբ շաժծօն մը հանգոյցը գրկեց երեք մարդիկը մէկանց. Օնօրիօն էր՝ որ իր հայրը աղաւաղ էր երեք հակառակորդներէն, ու ձին առաջ քշելով կը քաշկռաէր երեքը մէկանց, գետնի քարերուն վրայէն. Օնօրիօ, հօգը միջամտութեան վրայ միայն ձիուն վազքը դադարեցուց, եւ Շիքօրաբայ ու իր երկու ընկերները աղաւաղստն սողահով մահէ մը. Յետոյ, միշտ հօրը հրամանին վրայ, երեքը մէկ ամուր մը կա-

պեց : Այդ միջոցին Տօմէնկօ քաչեց դաշոյնը եւ Շիքօբարայի մօտեցաւ : Հասկեցայ խնդոյն թէ մարդուն վիզը պիտի կտրէր , բան մը որ խղճիս դպաւ , եւ զիս դրդեց որ միջամտեմ : Հնդկիկը չախորժեցաւ իմ ընթացքէս եւ զէնքը ինծի դարձուց :

— Լա՛ւ , ըսի , սպաննէ զիս , դուն որ խոստացած էիր իբր հայր միայն վարուիլ ինծի հետ : Բայց մի՛ կատարեր այդ սպանութիւնը որ պարզապէս չի վալլեր քեզի պէս քաջ ու վեհանձն մարդու մը :

Ժիշդ տեղին դպած էի : Հնդկիկը կակղեցաւ եւ դաշոյնը պահեց : Միայն թէ թող չտուաւ որ երեք մարդոց կապերը քակուին :

— Դանաւս չպիտի պղծեմ ձեր շան արւունով , ըսաւ անոնց . ձեր մարմինը հոս նուէր կը թողում անգղերուն եւ ակոյաւաններուն (դաշտային դայ) : Համբերեցէ՛ք , աչքերնիդ երկար առեն չպիտի մնան ձեր անիծեալ գանկին վրայ :

Յետոյ առինք այդ մարդոց ձիերը եւ նորէն ճամբայ ինկանք : Այդ միջոցին արդէն իսկ բազմաթիւ գիշակեր թռչուններ սկսած էին իջնել զէպի Շիքօբարայի եւ իր երկու ընկերներուն գտնուած կողմը : Մինչեւ ցորեկ այդպէս յառաջանալով Թորօնլուի մօտերը հասանք՝ եւ ճաշի նստանք : Տօմէնկօ որսի ելաւ , բայց երէները տակաւին չխորոված լսեցինք որ ձիաւորներու խումբ մը կու գայ մեր կողմը :

Տօմէնկօ մտիկ ըրաւ :

— Առնուաղն տասնըհինգ հոգի մը կան , ըսաւ քիչ ետքը . անպիտանները կ'երեւայ թէ օգնականներ առած են իրենց : Խոհեմութիւնը կը պահանջէ որ առանց ժամանակ կորսնցնելու լեռ ելլենք :

Իսկոյն ձիերնուս վրայ ցատկեցինք եւ խոյացանք առաջ , առանց գետեղբէն բաժնուելու : Վերջապէս Տօմէնկօ հուն մը գտաւ ուրկէ դիմաց անցնելու փորձ մը ըրինք , բայց զուր տեղը , որովհետեւ մեր ձիերը կը սահէին ամէն մէկ քայլին ու չէին կրնար յառաջանալ , Բաւական ժամանակ կորսնցուցինք այդ տեղ , առանց ո՛ր եւ է արգիւնք մը ձեռք բերելու : Մեր հակառակորդները մեզի հասնելու մօտ էին . որոշակի կը լսէինք

իրենց ձիերուն վրնջիւնը : Վերջապէս ստիպուեցանք ձիերը թողուլ որ ըստ բաղդի լուան հոսանքն ի վար , ու ցամաք ելլեն իրենց իրենց : Զիերը իջան վար , ու քիչ ետքը , իրենցմէ մէկուն վրնջիւնէն Օնօրիօ հետեւցուց թէ կրցած էին հոսանքէն ազատիլ ու ցամաք ելլել : Այդ միջոցին , որովհետեւ հետանալու ժամանակ չունէինք , ծովեզերքին վրայ , մացառուաներու մէջ բացուած խոր ծակի մը մէջ պահուեցանք : Տօմէնկօ միայն դուրսը մնաց , եւ ճիշդ այն վայրկեանին ուր մեր հակառակորդները գետին միւս եզերքը կը հասնէին , նետուեցաւ ջուրը : Հրացանի քանի մը հարուածներ մէկանց արձակուեցան , ու տեսանք որ մարմինի նմանող բան մը կը ծփայ ջուրին երեսը , ու կը ստնջ վար՝ հոսանքին հետ : Օնօրիօ խնդալով քաջատրեց ինծի թէ ի՛նչ է տտիկա , Տօմէնկօ ջուրը նետուած միջոցին հետ առած էր նաեւ մեր կապոցներէն մէկը : Կապոցը բնականաբար ջուրին երեսը մնացած էր , իսկ ինքը տակը : Մեր հակառակորդները՝ անանկ կարծած էին թէ այդ կապոցը մարդ մըն է , եւ հրացանաձգութենէն վերջ տեսնելով որ կը ծփայ ջուրին երեսը՝ հետեւցուցած էին թէ մեզմէ մէկը սպաննուած է իրենց գնդակներէն :

Օնօրիօ այսպէս մեկնեց իրողութիւնը : Քիչ ետքը ես ինքս համոզուեցայ տառա՛ Մեր հակառակորդները որոնք գետին միւս եզրը հասած էին , կը վիճէին իրարու հետ՝ ճշգրիտ համար թէ որո՛ւ կ'իյնայ այդ սպանութեան պատիւը , Ամէն մարդ կ'ըսէր թէ իր գնդակով սպաննուած է : Վերջապէս իրենց պեսը ստիպուեցաւ միջամտելու :

— Բարեկամներ , ըսաւ , հանդարտեցէ՛ք , փառքը ամէնուդ ալ կը պատկանի : Զմռնանք որ ասոնք երեք հոգի էին , եւ թէ երկու հոգի ալ կը մնան տակաւին :

Տօմէնկօ մէջտեղ չկար . չէինք դիտել թէ ի՛նչ եղած էր : Մեր թաքստոցէն կը դիտէինք դիմացի եզերքը խռնուած այդ կառավար մարդոց շարժումները : Տարակոյտ չկար որ ջուրէն անցնելէն տնմիջապէս վերջ պիտի գտնէին մեր պահուեցած տեղը , եւ այն տե՛ն . . . Անհաւատար կռիւ մը պիտի ըլլար

մեր մեղիքը, Պա՛հ մը ետք արդէն իսկ հաս-
կած էին թէ ո՛ւր կը գտնուէինք, Մեկզմէ-
կու ցոյց կուտային մեր թաքստոցը :

Յանկարծ , իրենցմէ մէկը պոռայ մեզի .

— Ո՛ւր որ կը գտնուիք , երեսան ելէք .
կամ անձնատուր եղէք եւ կամ կը մեռցնենք
զեւդ :

Աւելորդ է ըսել թէ տեղերնուս չէինք
լքածեր անգամ : Մեր պահած լուծիւնը ա՛լ
աւելի կատեցուց զիրենք , եւ հրացանի
քանի մը դնդակներ արձակուեցան դէպի մեր
կողմը : Անոնցմէ մէկը մահաւանդ ճիշդ ձեռ-
քիս մօտէն անցաւ :

Օնորիօ յիշոց մը արձակեց :

— Զգուշութի՛ւն , պոռաց յանկարծ , ան-
պիտանները , զգացեր են թէ ո՛ւր կը գըտ-
նուինք . . . :

ժամանակ չունեցաւ խօսքը աւարտելու :
Եր հրացանաձգութիւն մը ծայր տուաւ գե-
տին միւս կողմէն , Կացութիւնը կը կնճռու-
էր : Մեր գտնուած տեղը ո՛չ թէ միայն գէշ
գատապարտն մըն էր , այլ նաեւ հոնկէ ան-
կարելի էր ինքնապաշտպանութեան ո՛ր եւ է
գործ ընել , Պիտի ստիպուէինք մեռնիլ , ա-
նայց մեր թշնամիներուն բան մը բրած ըլ-
լաւ : Եւ արդէն հրացանս ալ Տօմէնկօյի
քովն էր : Շատ չանցած՝ երկրորդ հրացանա-
կապիկան յաջորդեց երրորդ մը , որու մի-
ջին Օնորիօ բազուկէն վիրաւորուեցաւ ,
մէկը շատ թեթեւ կերպով , Յուսահատած
մէք : Ազատում չկար , Երկուքիս համար ալ
հետեան վրայ մտածելու ժամը հասած էր :

Յանկարծ աղմուկ մը լսեցինք մեր գըլ-
թուն վրալ . հրացան մը արձակուեցաւ մեր
բաքտոցին կատարէն , եւ ցուրի աղաղակ մը
բուռեցաւ գետին միւս կողմէն , Քիչ ետքը
Մօմէնկօ յանկարծական յայանութիւն մը
բրաւ , ու մեզի օգնեց որ դուրս ելինք այդ
անթի ծակէն , Ճիշդ ատենին հասած էր ,
միայն հեռացանք գետեղրէն եւ գացինք
պատապարտիլ հողակոյտի մը ետին : Օնորիօ
այդ միջոցին զինքը վիրաւորող մարդը տես-
նելով , հօրը ձեռքէն առաւ հրացանը , եւ
գետեղրը իջաւ որպէս զի զայն սպաննէ ,
բայց իսկոյն ետ դարձաւ ըսելով .

— Ամէնքն ալ փախեր են :

— Անկարելի է , պոռացի , իրենք տասնը-
կէք հոգի , մենք երեք , ինչպէ՛ս կը փախ-
նան :

— Ապահովարար օգնական փնտռելու գա-
լու են , ըսաւ Տօմէնկօ :

Անմիջապէս հողի բարձունքին կատարը
եղանք , ու տեսանք որ կօշօնները (այս ա-
նունը կուտան դաշտային բնակիչներուն)
իրապէս կծիկը կը դնեն , եւ կրցածնուն չափ
չուա : Ասիկա ձեզի կրնայ լաւ գաղափար մը
տայ այդ պատուական Կօշօններուն քաջաւոր-
տութեան վրայ :

Օնորիօյի վէրքը վտանգաւոր բան մը չէր ,
Դացինք գտանք մեր ձիերը՝ որոնք հեռուն՝
կարծեա կռուին ելքին կը սպասէին , նոյն
ատեն աղուոր հանդիստ մը վայելելով : Ճամ-
բայ եղանք նորէն , հետզհետէ աւելի դժուա-
րանցանելի տեղերէ անցնելով , Երրորդ գիշերը
վրայ հասաւ , էնտէքանտանչիա ամրոցին մօ-
տերը հասած էինք : Տօմէնկօ առաջարկեց որ
հանդիստ առնենք հոն , բայց արգիլեց կրակ
վառել :

— Ամրոցէն կրնան մեզ տեսնել , ըսաւ ,
եւ նեղութիւն պատճառել :

Գիշերը շատ հանգաւոր անցուցինք : Մին-
չեւ լոյս կսկիւ միայն երազեցի :

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ա.ԱՆՆ. Տ. Մաղափա՛ Ս. Պատրիարք՝ իր
անուան տօնախմբութեանը առթիւ՝ երեք-
շաբթի օրը առաւօտէն մինչեւ իրիկուն չորս-
հաւորական այցելութիւններ ընդունեց , ինչ-
պէս նաեւ բազմաթիւ հեռագիրներ գաւառ-
ներէն եւ արտասահմանէ : Դատական եւ
կրօնական գործոց նախարարութեան կողմէ
ն. Սրբազնութեան այցելեց Սէրմէզ պէյ ,
Նօյնպէս , Կրօն. եւ Քաղ. Ժողովներու անդամ-
ները , Տեսուչ եւ Թաղ. Սորհուրդներու , Հո-
գաբարձութեանց , Խնամակալութեանց ներկա-
յացուցիչներ , Պատրիարքարանի պաշտօնէու-
թիւնը խմբովին , Երուսաղէմի Պատր. Փո-
խանորդ Երէցեան Տ. Գէօրգ Սրբազան , Իրպ-
րեմիանքի վերապատուչ Դուրեան Սրբազան ,
Պրեսպայի առաջնորդ Արքարունի Սրբազան ,
քարոզիչներ , աւագերէցներ , զանազան դա-
սակարգերու պատկանող ծանօթ անձնաւո-
րութիւններ , եւ մասուլիս ներկայացուցիչներ :
Շնորհաւորական այցելութիւն տուին նաեւ
Յունաց Պատրիարքական Փոխանորդը , Հայ
Հռոմէականաց Պատրիարքարանին կողմէ Մէր-
տինի Գերապայծառը եւ Անտոնեան Մի-
արանութեան կողմէ Հ. Դանիէլ վրդ. Միա-
սէրեան , Երուսաղէմի Ս. Պատրիարքը հեռա-
դրաւ չնորհաւորած է Օրմանեան Ս. Պատրի-
արքին՝ անուան տօնախմբութիւնը :

Արեւելեան Մամուլի վերջին թիւին մէջ «Արժանիքի ուրացում» վերնագրով նամակ մը հրատարակած է Մեարոյ Նուարեան, բաղբերով Աղեքսանդր Փանոսեանի անունին չլիշուելուն դէմ՝ ժամանակակից հայ բանաստեղծներու չարքին մէջ, նոյն կիսամեայ Հանդէսի նախորդ թիւով հրատարակուած Գնահատականին մէջ որուն հեղինակը, Արտաշէս Յարութիւնեան, հիշերէն ու նորերէն, մեռածներէն ու կենդանիներէն ո՛չ մէկը յիշատակելու չէր մտայած սակայն :

«Մաշկարացի ուսումնականը, — կը գրէ Յարաւաճայ Բաղբերքին հեղինակը — զանց կընէ, չլիշեր անգամ Աղեքսանդր Փանոսեանի (Ալփասլան) նման նշանաւոր ախոյեան մը որ քսան տարիէ՛ հետէ հայ բանաստեղծութեան առաջնորդին վրայ կը թեւածէ, յանգաւոր գրականութեան սեպէ թէ ամէն ճիւղերն ալ մեծ ու մերթ անօրինակ յաջողակութեամբ մը մշակելով, մանկական, քնարերգական, սիրային, երգիծական, նկարագրական եւ սամկական քերթուածներու փոփոխ ու հրապուրիչ պէսպիսութիւնով մը : որ հազարաւոր գնահատողներ ունի Պոլսէ սկսեալ մինչեւ յետին դաւառը ուր ալդ : թերթ մը կամ օրացոյց մը կը հասնի : Հայ ոտանաւորներու կարատ ու դարձգարծիկ տողերով յօրինուածքը որու՝ կարծենք՝ ինք Փանոսեան սկիզբ ըրած է : թերեւս մէկէ տեւելի հայ բանաստեղծներու ծառայած է իր օրինակ» :

Կատարելապէս համամիտ Մեարոյ Նուարեանի այս եւ յաջորդ տողերուն, եւ իբրեւ համակրող մը ու գնահատող մը Աղեքս. Փանոսեանի բանաստեղծական տաղանդին — որուն փայլուն արտադրութիւնները Մասիսի մէջ ալ հիւրընկալելու հաճոյքը ունեցած ենք — կը ցախնք որ ինքզինքը անաչառ ու անկողմնակալ քննադատ ձեւացնող գրիչ մը, ճաւնընթոք ճարտար մէջ աքնութեամբ ու կրկին կրկին սրբագրութեամբ արտադրուած ճաւնընթոք ոտանաւորներու հասորիկ մը պանծացնելու եւ խնկարկելու վերացումին մէջ՝ մոռնալ կը ձեւադնէ գոյութիւնը Փանոսեանին որ միակ տարուան մը մէջ անոնց չափ ու անանցմէ դերադանցապէս գեղեցիկ քերթուածներ գրած է :

«Տիեզերք եւ իր կազմութիւնը» — Տըթ. Ն. Տաղաւարեանի այս երկատիրութիւնը, որ Դիտական Կաճառի մը առջեւ արտասանուած երեք բանախօսութեանց ամբողջութիւն մըն է եւ ֆրանսերէն հատոր մը կը կազմէ, հայերէնի թարգմանուած ըլլալով՝ Արմաշի Դպրեւանքին նախկին սաներէն Սահակ վրդ.

Օտապաշեանի կողմէ, — այժմ առաջին փախորդ Սերաստիոյ, — հեղինակին ձեռնած է : Տըթ. Տաղաւարեան փափաղելով որ արեւելէն նպաստաւորութի իր ծննդավայրը, Սերաստիա, որ թարգմանչին ալ ծննդավայրն է, ապագրել տալով զայն իր ծախքով, հասոյթը յատկացուցած է Սերաստիոյ Որբանոցին : Պատկերազարդ գեղեցիկ հատոր մը կը կազմէ Տիեզերք եւ իր կազմութիւնը, որուն ընթերցումը մեծապէս կրնայ հետաքրքրել զիտութեան սիրահար միտքերը : Գին 10 դրր վաճառման կեդրոնատեղի՝ Հիւանդանոցի արհեստանոցին սենեակը :

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԻՖ. Տարեւորդան 1902-1903

Վարժարանիս ԻՖ. տարեշրջանը կը սկսի յառաջիկայ (1902) սեպտեմբեր 1ին : Նոյնի աշակերտաց մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան օգոստոս 30ին եւ 31ին, իսկ դասերը կանոնաւորապէս կը սկսին սեպտեմբեր 2ին, Բշ. օր

Թոշակաւոր գիշերօթիկ աշակերտաց ընդունելութեան համար վարժարանս ունի երկու տեսակ պայման : — Պէտք է վճարել :

Ա. Միանուազ մուտք՝ 3 օսմ. ոսկի : Տարեթոշակ 20 օսմ. ոսկի : Արձակուրդի տուրք 1 օսմ. ոսկի : Բոլոր ծախքերը վարժարանի վրայ են :

Բ. Առանց մուտքի, 12 օսմ. ոսկի տարեթոշակ եւ 1 ոսկի արձակուրդի տուրք պայմանաւ սակայն որ աշակերտաց ծնողք հոգան իրենց զաւակաց զգեստի, կօշիկի, կարկանդակի, դասագրքի եւ դպրոցական այլ պիտոյի մահճակալի եւ անկողնոյ, ինչպէս նաեւ դեղորէից ծախքը : Իսկ վարժարանս կու տայ սնունդ, ուսում եւ կը հոգայ լուացքի, բժշկի եւ այլ ծախքերը :

Ցերեկեայ թոշակաւորները պարտին վճարել 6 օսմ. ոսկի :

Մանրամասն տեղեկութեանց համար, ծնողք կամ պաշտպանք կրնան զիմել Կ. Պոլիս, Պատրիարքարանը, կամ Կարին, վարժարանիս տեսչութեանն : — Յառաջիկայ տարի նոր ձրավարժներ չլիտի ընդունուին : այդ մասին տեղի ունենայիք ո՛ր եւ է զիմում առանց հետեւանքի պիտի մնայ :

Կարին Տեսչութիւն Սանատարեան Վարժարանի

Արտոնատէր Կ. Ս. Իիթիլիճեօն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինեաներլար եօղուշու, Թիւ 27

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանիս նոր տարեչրջանը կը սկսի Սեպտ. 10 (Ն. Տ.) Դշ. : Տարեթիւշակն է գիւրթիկներուն համար 16 ոսկի օսմ. որուն կէջը վճարելի է սեպտեմբերի սկիզբը, եւ միւս կէջը՝ յունվարի մէջ :

Վարժարանիս Տնօրէնին որդին, Մր. Ռ. Զէմպըրա, Բանաստայի մէկ նշանաւոր համալարանին մէջ փայլուն ընթացք մը աւարտել է Ուսուցիչ Արուեստից տիւղոսին արժանանալէ վերջ, կը վերադառնայ յառաջիկայ տարի, ստանձնելու համար հաստատութեանս Ազգիներէն դասերուն մեծագոյն մասը, նախապարաստական կարգերէն մինչեւ բարձրագոյն կարգը, եւ աշակերտները վարժեցնելու համար այդ լեզուաւինչպէս գրելու նոյնպէս խօսելու մէջ. իր դասախօսութեան լեզուն պիտի ըլլայ միայն Անգլիերէն : Միեւնոյն ժամանակ, պիտի շարունակուին անգլ. լայ. թարգմանութեան վարժութիւնները ընդկառաւարաց խնամքին տակ :

Ջուլիականարութեան կանոնաւոր դաս պիտի տրուի փափագող աշակերտներուն, տարեկան 2 օսմ. ոսկիի յաւելուածակսն վճարուով :

Վարժարանիս պարտէզին կցուեցան վերջերս ընդարձակ գետիններ, որոնք նոր դիւրութիւններ պիտի տան աշակերտներուն զբօսանքի ժամերը աւելի հաճելի ընելու :

Աւելի անդեկութիւններու համար դիմել Մր. Ռ. Ռ. Բիթի, Պայպըլ-Հառես, Կ. Պոլիս, կամ վարժարանիս Տնօրէն Տր. Ռ. Զէմպըրսի, նամակները ուղղելով Պայպըլ-Հառես :

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՈՍԿԵՂԵՆ ԲԱՆԱԼԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵՁՈՒԻ 360 ԵՐԵՍ

Խիստ կարճ ժամանակի մէջ կ'ուսուցանէ կարգալ եւ հասկնալ, խօսիլ ու շարադրել, գիրիկն եւ գուարճալի կերպով : Կեդրոն 6. Մատթէոսեան վաճառատուն :

Գին 15 դահեկան :

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ ձեւաք	240,000,000 ֆր.
1899ին զանձուած ապահովագին	19,500,000 »
Դրամազուելու եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամազուելու	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԶԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ ձեւաք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամազուելու եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ լինիօնի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐՆԵԼԻՔԻ ՄԷՋ ԴՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով ինքիօն ապահովագրուողք ՉԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆայիւն դիմացը
Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՎԱՃԱՌԱՍՈՒՆ ՀԷՐՃԱՅԻ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ
Յաճախորդաց դիւրութեան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ
Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոհարեղէններ
ունենալ . դիմեցէ՛ք
կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց թիւ 13



Հերմայի Վաճառատուներ ունի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոհարեղէններ ,
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ .
Հերմայի Վաճառատան գիներն անմրցելի են .
Հերմայի Վաճառատուներ ունի արծաթեղէն
առարկաներ ,
Հերմայի Վաճառատուներ ունի ժամացոյցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պստօն) ,

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրին քան կանխիկ , մնացեալին հա-
մար չարաթափան հարիւրին հինգ վարուստ .
կանխիկ գնողին համար 100ին 5 գեղդ .
Գործածուած գոհարեղէններ , եթէ քան-
ուած չեն , 100ին 10 գեղդով ետ կ'առնուին .



Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ոտքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին :

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ , իսկ էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է .
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն
աւելի կատարեալագործուածը , հաստատունը եւ
դիւրագործածելին ըլլալուն բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գէշ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միւրայն Սինկեր Ընկերութեան վաճառ-
տանց մէջ՝

ԲԵՐԱ , Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց .

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան , Թիւնէլին ետեւը .
2. Գարաբէօյ , Թրամկէյին կայարանին Դիմաց .

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ .
2. Սուլթան Պէյազիտ .

Դասերը եւ նորոգութիւնք ձրի .

Կասաբեալ երաւեստորութիւն

Մասնաձեռքի գաւառաց բոլոր փողոցներուն մէջ

ՀԱՄԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎԱՃԱՌՈՒՄՆԵՐ